



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԲԱՅԱՆԱՅԻՑ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

**ԻՐԱՔԱՆՉԻՐՍ ՈՒՆԻՆՔ ՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳԻՐ,  
 ՍԱԿԱՅՆ ՀԱԲԱՔԱԲԱՐ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱՆՔ ՄԵԿ ԵՒ  
 ՄԻԵՆՈՅՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

***Պատգամեց Առաջնորդ Սրբազան Հայրը***

Ամերիկայի Արեւմտեան Թեմիս Ազգային երեսփոխանական ժողովի նախօրեակին, Չորեքշաբթի, 17 Մայիս 2006-ին, տեղի ունեցաւ քահանայից կրօնական միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Թեմիս Հոգեւորականաց Դասուն: Առաջնորդ Սրբազանին յատուկ հրաւերով համագումարին ներկայ եղաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի:

Առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Գիշերային ժամերգութիւն, որուն աւարտին, Առաջնորդ Սրբազանը կատարեց հոգեւոր խորհրդածութիւն, որ դարձաւ նաեւ միօրեայ համագումարին Սրբազան Հօր բացման խօսքը: Սրբազանը ամէն բանէ առաջ փառք եւ գոհութիւն յայտնեց ամենաբարին Աստուծոյ, որ այս օրը պարգեւեց, 34-րդ Երեսփոխանական Նստաշրջանի նախօրեակին կատարելու Քահանայից Համագումարը: Սրբազանը հոգեւոր խորհրդածութեան առաջնորդ գաղափարներ ընտրած էր, չորս տարիներ առաջ, 2002-ի Սեպտեմբերին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայիայի հովոցին մէջ տեղի ունեցած Քահանայից Համագումարէն բխած եւ հոգեւորականներու կողմէ գրուած միացեալ Յայտարարութենէն երեք կետեր: Այդ կետերուն մէջ կը շեշտուէին առաջին՝ վերանորոգուիլ, երկրորդ՝ սերտ կապ պահել մեր ինքնին յանձնուած հօտին հետ, երրորդ՝ խաչին հաւատքովը եւ Ս. Հոգիին զօրութեամբ յաղթել բոլոր տեսակի նեղութեանց եւ դժուարութեանց:

Առաջնորդ Սրբազանը շեշտեց այն, որ մենք յաճախ դժուարութիւններու մասին կը խօսիմք, սակայն անոնց լուծումը մեր անձերէն դուրս կը փնտռենք: Դիւրին է աժան ձեւով ճառելը, կարելորը, սակայն՝ գործելն է, յանձնառու ըլլալ դիմակալելու ամէն տեսակի դժուարութիւն եւ նեղութիւն: Մենք պետք ունինք վերանորոգուելու, պետք է աւելի ճիգ թափենք մեր հօտին մօտիկ ըլլալու, անոր հետ տազնապելու, անոր հոգեւոր սնունդին ու աճման հոգ տանելու, նաեւ խաչին հաւատքով մեր դժուարութիւնները յաղթահարելու: Մենք պետք է նաեւ յարուցուած դժուարութիւնները լուծելու միջոցներու եւ ձեւերու մասին մտածենք եւ այդ

ուղղութեամբ աշխատինք, շեշտեց Սրբազան Հայրը: Սրբազանը, Պօղոս Առաքելի խօսքը մեջբերելով ըսաւ. «Կ'աղաչեմ որ դուք ձեզ Աստուծոյ ընծայեք որպէս կենդանի զոհ մը՝ իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Ռոմ. 12:1-2): Շարունակելով իր խօսքը, Սրբազան Հայրը ըսաւ, որ պէտք է մեր ուխտը վերահաստատենք, որովհետեւ մենք ինքնակոչ կամ մարդակոչ քահանաներ չենք, այլ՝ Աստուածակոչ, ուստի՝ մենք մեզ որպէս կենդանի զոհ պէտք է Աստուծոյ ընծայենք: Մեծամիտ չըլլանք, որովհետեւ մեր մեծամտութեան պատճառով մենք աւելի կը սխալինք, աւելի կը շեղինք մեր առաքելութենէն եւ ուրիշներու ալ գայթակղութեան պատճառ կ'ըլլանք:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով նաեւ հատուած մը կարդաց երջանկայիշատակ Բարգէն Կաթողիկոսի «Հայոց Եկեղեցին» գիրքէն, ուր կը խօսուի հոգեւոր պաշտօնեային ունենալիք ճշմարիտ նկարագրին մասին, աւելցնելով. «Իւրաքանչիւրս ունինք յատուկ նկարագիր մը, սակայն հաւաքաբար պէտք է ունենանք մէկ եւ միեւնոյն նկարագիրը՝ հոգեւորականի նկարագիր»: Ուստի, Սրբազանը բոլորին կոչ ուղղեց ինքնաքննութեան, վերաթարմացնելու եւ վերանորոգելու համար մեր ուխտը, ի փառս Աստուծոյ եւ ի շինութիւն եկեղեցւոյս եւ ի պայծառութիւն ազգիս հայոց:

## ԹՉԹՉՂՁԾԾՃԱ

Հոգեւոր խորհրդածութենէն ետք, «Տիգրանեան» սրահին մէջ սկսաւ միօրեայ համագումարը: Ա. նիստը սկսաւ ժամը 11:30-ին: Առաջնորդ Սրբազան Հօր առաջնորդութեամբ նիստը բացուեցաւ Տէրունական աղօթքով եւ «Իմաստութիւն Հօր, Յիսուս» մաղթանքով: Սրբազանը ողջունեց Եփրեմ Սրբազանը, Հայր Սուրբերը, աւագ քահանաները եւ թեմիս հոգեւորականաց դասը, բարձր գնահատեց թեմէս ներս յատկապէս վերջին ամիսներուն Հայր Սուրբերուն եւ Հոգեւոր Հովիւներուն կողմէ տարուած հոգեւոր աշխատանքները, աւելիին մղելով բոլորը: Ապա հրաւիրեց Եփրեմ Սրբազանը՝ իր ողջոյնի խօսքը արտասանելու: Եփրեմ Սրբազան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր այս առիթը իրեն շնորհելուն համար, ողջունեց բոլոր քահանայ հայրերը, կոչ ուղղելով բոլորին, որ ընթերցանութեամբ հարստացնեն իրենց գիտելիքները, յատկապէս Աստուածաշունչ կարդալով վերանորոգեն իրենց անձերը: Սրբազանը յաջողութիւն մաղթեց այս եւ գալիք օրերու ժողովական աշխատանքներուն:

Հոգեւորականաց Համագումարի Դիւան ընտրուեցաւ Կրօնական Ժողովի Դիւանը՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան՝ ատենապետ, եւ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան՝ ատենադպիր: Ընթերցուեցաւ եւ քննարկուեցաւ Կրօնական Ժողովի միամեայ տեղեկագիրը:

Համագումարին տրուեցան երկու դասախօսութիւններ՝ երկու Հայր Սուրբերուն կողմէ: Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան իբրեւ նիւթ ընտրած էր Տիեզերական երեք ժողովները, ներկայացուց այդ ժամանակներու հերձուածողներու գաղափարները, զանոնք համեմատեց այսօրուան հերետիկոսական գաղափարներ ունեցողներուն հետ, անդրադառնալով այս օրերուն հրապարակ իջած “The Da Vinci Code”-ին թիւր վարդապետութեան մասին, բացատրելով Առաքելական եւ

Ուղղափառ եկեղեցիներու ամուր հաւատամքն ու դաւանանքը: Իսկ երկրորդ դասախօսութիւնը ներկայացուց Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, խօսելով՝ «Ս. Երրորդութեան Վարդապետութիւնը» նիւթին մասին: Հայր Սուրբը առանձին-առանձին խօսեցաւ Ս. Երրորդութեան՝ Հօր, Որդւոյ եւ Ս. Հոգւոյ մասին, բացատրելով դարերու ընթացքին զանազան եկեղեցիներու եւ աղանդաւորական շարժումներու միջեւ ստեղծուած տարբեր հասկացողութեանց եւ ըմբռնումներուն մասին, աւարտին՝ ներկայացնելով Հայ Եկեղեցւոյ հաւատամքը Ս. Երրորդութեան համագոյութեան, համաբնութեան եւ մէկութեան մասին:

Ա. նիստէն ետք տեղի ունեցաւ հաւաքական ճաշ:

Բ. նիստը սկսաւ ժամը 2:15-ին եւ շարունակուեցաւ մինչեւ 6:15: Այս նիստին տեղի ունեցաւ Կրօնական Ժողով: Ընթերցուեցաւ ու վաւերացուեցաւ Կրօնական նախորդ Ժողովի ատենագրութիւնը. ընթերցուեցան շրջաններէն եւ միութիւններէ ստացուած նամակներ, կատարուեցաւ Ազգ. Երեսփոխանական Ժողովի եկեղեցական երեսփոխաններու ընտրութիւնը, քննարկուեցան Ազգ. Երեսփոխանական Ժողովին ներկայացուելիք հարցեր, ծրագրուեցան Հանրապետական եւ Հայրապետական մաղթանքներու, նաեւ Համբարձման ու Հոգեգալստեան տօներուն առիթով կատարուելիք եկեղեցական արարողութիւնները, խօսուեցաւ Հայ Դպրոցի Տարուան հռչակման առիթով յառաջիկային կայանալիք ձեռնարկներուն մասին, ինչպէս նաեւ խօսուեցան չնախատեսուած հարցերու մասին՝ կատարելով առաջարկներ:

Համագումարի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը յաջողութիւն մաղթեց յառաջիկայ օրերու ժողովական աշխատանքներուն, եւ «Պահպանիչ»ով փակեց հոգեշահ միօրեայ այս համագումարը:

**ՊԱԿ**

### **Western Prelacy Clergy Conference**

**WE EACH HAVE OUR INDIVIDUAL CHARACTERS, BUT COLLECTIVELY WE MUST HAVE ONE AND THE SAME CHARACTER, A PRIESTLY ONE**

***Declared the Prelate***

On the eve of the Western Prelacy 34<sup>th</sup> Representatives Assembly, on Wednesday, May 17, 2006, a one-day clergy conference took place at Encino's Holy Martyrs Church. The conference was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of the clergy order, including H.E. Archbishop Yeprem Tabakian who is visiting our Prelacy.

At 10:30 a.m. the day began with prayer services inside the church, followed by opening remarks by the Prelate. The Prelate began by expressing thanks and gratitude to the Lord for granting the opportunity to hold this conference. In his remarks the Prelate spoke of the ideas that emerged from the Clergy Conference at the Catholicosate in September of 2002, focusing on three main points. He stressed

spiritual renewal, keeping a close bond with parishioners, and to triumph over hardships with faith in the Cross and the Holy Spirit.

The Prelate stressed that we often find ourselves in hardship yet we seek answers outside of ourselves. We must not look for easy solutions but rather work towards being able to confront any and all types of hardship. We have a need for renewal; we must make more of an effort to reach out to our parishioners and to offer them spiritual nourishment. Reading from the Letter of Paul the Prelate continued: "I appeal to you therefore, brethren, by the mercies of God, to present your bodies as a living sacrifice, holy and acceptable to God, which is your spiritual worship. Do not be conformed to this world but be transformed by the renewal of your mind, that you may prove what is the will of God, what is good and acceptable and perfect" (Romans 12:1-2). The Prelate then read an excerpt from the book "The Armenian Church", by Catholicos Papken of blessed memory, about having an honest character adding, "We each have our individual characters, but collectively we must have one and the same character; a priestly one".

## **CONFERENCE**

Following the church services and spiritual reflections, the first session of the conference convened at 11:30 a.m. at "Dickranian" Hall. The session opened with the Lord's Prayer, followed by the Prelate welcoming Archbishop Tabakian and clergy members, highly commended the work they have done particularly in the past few months. He then invited Arch. Tabakian to deliver his remarks.

During the conference, Very Rev. Fr. Muron Aznikian lectured on the three Ecumenical Councils and Very Rev. Fr. Barthev Gulumian on the doctrine of the Holy Cross.

Following lunch, the second session began at 2:15 p.m. and continued until 6:15 p.m. The second session was a meeting of the Religious Council that reviewed the Council's activities during the past year, as well as issues relating to the then upcoming Representatives Assembly.

The conference concluded with the Prelate's blessings and "Bahbanich" prayer.